/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ղազախստան/Շիմքենտ/01.10-03.10.2018 թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից համատեղ և Ղազախստանի Հանրապետության վիճակագրության կոմիտեի օժանդակությամբ կազմակերպված Վիճակագրության 13-րդ SPECA (ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունների հատուկ ծրագիր) աշխատանքային խմբի հանդիպում

- **Քննարկված թեմաները**

Հանդիպմանը հրավիրված էին մասնակցելու ազգային վիճակագրական գործակալությունների ղեկավարները և ավագ մենեջերները, որոնք պատասխանատու են աշխարհատարածական տեղեկատվության կամ կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) համար:

Հանդիպման նպատակն էր քննարկել ԿԶՆ-ի համար վիճակագրության մշակման առաջընթացի, ԿԶՆ-ի և այլ վիճակագրության համար աշխարհատարածական տեղեկատվության օգտագործման, ազգային վիճակագրական համակարգի սահմանման, ռեգիստրների և տվյալների ինտեգրման վերաբերյալ հարցեր: Հանդիպմանը քննարկվեցին պաշտոնական վիճակագրության համար ինստիտուցիոնալ և կազմակերպչական միջավայրի վերաբերյալ հարցեր, որը կխթանի տվյալների ոչ ավանդական այնպիսի աղբյուրների հասանելիությունն ու օգտագործումը, ինչպիսիք են վարչական ռեգիստրները և աշխարհատարածական տեղեկատվությունը՝ լրացնելու ավանդական հետազոտություններին ու հաշվառումներին պաշտոնական վիճակագրության և ԿԶՆ-ի ցուցանիշների արտադրման համար:

Հանդիպմանը քննարկվեցին նաև կառավարման, համակարգման և գործընկերության համապատասխան մեխանիզմները և գործիքները, որոնք կաջակցեն ընդհանուր համակարգված մոտեցմանը ողջ վիճակագրական

համակարգում տվյալների ոչ ավանդական աղբյուրների ինտեգրման համար՝ բարելավելու դրա արդյունքների համաձայնեցվածությունն ու համադրելիությունը:
Հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին տվյալների ինտեգրման ազգային լավագույն փորձառությունները և մարտահրավերները՝ պաշտոնական վիճակագրության և ԿԶՆ-ի ցուցանիշների կազմման համար:
Հանդիպմանը քննարկվեցին նաև հարցեր կապված տվյալների աղբյուրների, մեթոդաբանության, վիճակագրության գործընթացների և արդյունքների ու հետագա զարգացումների հետ՝ ադապտացնելու որակի ստանդարտներն արագ փոփոխվող էկոհամակարգերին և նորարարական տեխնոլոգիաների և տվյալների այլընտրանքային աղբյուրների օգտագործմանը:

Համաձայն օրակարգի՝ հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

- Ողջույնի խոսք և հանդիպման բացում՝ Ղազախստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիա և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողով

Նստաշրջան 1. Ազգային վիճակագրական համակարգի սահմանումը

- Խորացված վերանայման շնորհանդես Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի կողմից՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
- Շնորհանդես սահմանումների վերաբերյալ՝ Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիա
- Ազգային շնորհանդեսներ՝ Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա
- Փոքր խմբային քննարկումներ
- Ամփոփում լիագումար նիստում

Նստաշրջան 2. Վիճակագրության զարգացման առաջընթացը ԿԶՆ-ի համար

- Շնորհանդեսների ներկայացում՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողով
- Երկրների համառոտ շնորհանդեսներ հիմնական խնդիրների վերաբերյալ
- Քննարկում առաջնահերթությունների և ապագա գործունեության վերաբերյալ

Նստաշրջան 3. Աշխարհատարածական տեղեկատվության օգտագործումը ԿԶՆ-ի և այլ վիճակագրության համար

- Վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրման վերաբերյալ միջազգային աշխատանքի ընդհանուր նկարագիրը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
- Ազգային շնորհանդեսներ՝ Ղրղզստան, Մոլդովա
- Փոքր խմբային քննարկումներ ազգային աշխարհատարածական գործակալությունների հետ գործընկերության զարգացման և ԿԶՆ-ի և այլ վիճակագրության համար աշխարհատարածական տվյալների օգտագործման վերաբերյալ
- Ամփոփում լիագումար նիստում
- Աշխարհատարածական տեղեկատվության օգտագործումը մարդահամարների և ԿԶՆ-ի վիճակագրության համար

- Ազգային շնորհանդեսներ՝ Մոնղոլիա, Տաջիկստան
- Փոքր խմբային քննարկումներ աշխարհատարածական տեղեկատվության օգտագործման լավ փորձի վերաբերյալ
- Ամփոփում լիագումար նիստում՝ Քննարկում առաջնահերթությունների և ապագա գործունեության վերաբերյալ

Նստաշրջան 4. Ռեգիստրները և տվյալների ինտեգրումը ԿՁՆ-ի և այլ վիճակագրության համար

- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի նոր ուղեցույցների ներկայացում ընդհանուր առմամբ տվյալների ինտեգրման և միգրացիոն վիճակագրության տվյալների ինտեգրման վերաբերյալ՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
- Ազգային շնորհանդեսներ՝ Ադրբեջան, Վրաստան
- Փոքր խմբային քննարկումներ
- Ամփոփում լիագումար նիստում
- Քննարկում առաջնահերթությունների և ապագա գործունեության վերաբերյալ:

Հայաստանը հանդիպմանը ներկայացրեց «Առաջընթացը և կայուն զարգացման նպատակների համար վիճակագրության մշակման հիմնական խնդիրները» խորագրով և «Ազգային վիճակագրական համակարգի սահմանումը, ներառյալ վիճակագրության այլ ազգային արտադրողների համակարգումը» խորագրով շնորհանդեսները:

Շնորհանդեսների և քննարկումների միջոցով Հայաստանը հանդիպմանը ներկայացրեց իր փորձն ազգային վիճակագրական համակարգի սահմանման և համակարգման, պաշտոնական վիճակագրության օրենսդրության, վարչական ռեգիստրների օգտագործման, ինչպես նաև ԿՁՆ-ի համար վիճակագրության մշակման, տարածման և հաղորդակցման, ազգային հաշվետվողականության հարթակի մշակման և գործարկման (http://www.armstat.am/am/?nid=655), վիճակագրական ներուժի ամրապնդման գործողությունների վերաբերյալ:

- **Արդյունքները**

Մասնակցությունը հանդիպմանը հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին առավել լավ պատկերացում կազմել վիճակագրական համակարգի ինստիտուցիոնալ, կազմակերպչական և կառավարման միջոցների մասին, որոնք կարող են լավագույն կերպով նպաստել շարունակելու պաշտոնական վիճակագրության անհրաժեշտ վերափոխումն ու արդիականացումը՝ անդրադառնալու սպառողների ի հայտ եկող կարիքներին, որոնք վերաբերում են բարձր որակի և միջազգայնորեն համադրելի տվյալներին և վիճակագրությանը:

Տեղեկատվության և փորձի, մարտահրավերների և քաղված դասերի փոխանակման միջոցով հանդիպման ընթացքում քննարկումները կնպաստեն ազգային

վիճակագրական համակարգը ժամանակակից, առավել ինտեգրացված և համակարգված դարձնելուն:

Նշումներ

Հանդիպման ընթացքում տեղի ունեցան քննարկումներ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչ՝ պարոն Ստիվեն Վեյլի հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, վիճակագրական համակարգի մոդեռնիզացման գործիքների կիրառման և վարչական ռեգիստրների ու աշխարհատարածական տեղեկատվության օգտագործման բնագավառներում:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյան